

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԵՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

XX դարի առաջին կեսի հասարակական-քաղաքական զարգացումները երևան հանեցին մոդեռնիզմի ժամանակաշրջանի տեսական-հայեցակարգային ու գաղափարաքաղաքական ուղենիշների որոշակի սահմանափակվածությունն ու «քրոնոտոպային անհամարժեքությունը»^{*}: Խոսքը վերաբերում է հատկապես հասարակության քաղաքական զարգացման գծային մոդելների, գիտատեխնիկական առաջընթացի դերի բացարձակացման, մենախոսային (մոնոլոգային) հաղորդակցական համակարգերի լայն կիրառման, մարդկային գործունեության ռացիոնալացման, հասարակության ինդուստրիալացման հետևանքով ի հայտ եկած «սև խոռոչների» ու հասարակական-քաղաքական նեգատիվ երևույթների՝ ամբողջատիրական դիկտատուրաների, սոցիալական մեծ ցնցումների, համաշխարհային պատերազմների թողած ազդեցությանը մարդկության քաղաքակրթական զարգացման շրջապտույտում: Այդ ժամանակաշրջանի հատկանշական բնութագրություն է տալիս Վ. Բիբլերը՝ նշելով, որ XX դարի ողբերգություններում բացահայտվում և գիտակցվում են եվրոպական քաղաքակրթության առաջընթացի չափանիշ հանդիսացող գիտություն-տեխնիկա-մյուսական բարեկեցություն-բարոյականություն-սոցիալական մատրիցա աստիճանակարգի ճակատագրական սպառվածությունն ու մաշվածությունը¹: Այս առումով հետմոդեռնիզմը ներկայանում է որպես մոդեռնիզմի ուղղագիծ աշխարհընկալմանը հակադրվող յուրատեսակ արձագանք, որը ժխտում է հասարակության գծային առաջընթացի պոզիտիվիստական, տեխնոկրատական ու ռացիոնալիստական ակունքները: Այն իր հերթին արտացոլում է ժամանակակից հետինդուստրիալ, տեղեկատվական, հաղորդակցական հասարակության ինտեգրալ ամբողջությունը, որը որոշակի փոխակերպման է ենթարկում նաև հասարակության քաղաքական կյանքն ամբողջությամբ:

Հետմոդեռնիստական տեսական-գաղափարական աշխարհընկալման մյուս կարևոր առանձնահատկությունը, որով մասնավորապես կարելի է բացատրել քաղաքականության մեջ երկխոսության կառուցակարգերի առավել հաճախակի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտությունը, վերա-

^{*} Քրոնոտոպային անհամարժեքություն ասելով նկատի ունենք որոշակի գաղափարների անհամապատասխանությունը, ժամկետանց բնույթը տվյալ տարածաժամանակային կոնտինիումում:

¹ Տե՛ս **Библер В. С.** От наукоучения к логике культуры. Два философских введения в XXI веке. М., 1991, էջ 262:

բերում է հետմոդեռնիզմի հիմնական բնութագրիչ հանդիսացող այնպիսի երևույթի, ինչպիսին հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, այդ թվում և քաղաքական կյանքում, անորոշությունների թվի աճն է: Բանն այն է, որ ժամանակակից աշխարհը զարգացման մի այնպիսի փուլում է, որը հարաբերականորեն կարելի է անվանել «գլոբալ անորոշությունների» ժամանակաշրջան: Ի՞նչն է բնորոշ այս նոր իրավիճակին: Եթե նախկինում քաղաքականության մեզա-, մակրո- և մեզոմակարդակներում քաղաքականության ժամանակի ընթացքն ավելի դանդաղ ու հետևաբար նաև ավելի կանխատեսելի էր, ապա այսօր՝ XXI դարի երկրորդ տասնամյակում, համամարդկային մասշտաբի աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական ու դրանցով պայմանավորված՝ նաև առանձին պետությունների ներսում ընթացող քաղաքական գործընթացները ձեռք են բերում սրընթաց արագություն ու խելահեղ տեմպ, երբ քաղաքական իրադարձություններն ու գործընթացները փոփոխվում են ժամ առ ժամ, դրանով պայմանավորված՝ անորոշությունները դարձել են քաղաքական իրականության արտացոլման ու ընկալման բնական վիճակ: Քաղաքականության տարածա-ժամանակային կոնտինիումի այսպիսի փոխակերպումները, քաղաքականության մեկնաբանման ավանդական մոտեցումներից անցումը մոդեռնիստական և հետմոդեռնիստական տեսություններին շատ գծերով նման են դասական և քվանտային մեխանիկայի շրջանակներում օբյեկտիվ իրականության ընկալման ու մեկնաբանման տարբերությանը: Դասական մեխանիկայի կողմնակիցները ներկայացնում էին շրջապատող իրականության այնպիսի պատկեր, որտեղ անորոշություններն ու պատահականությունները տեղ չունեին. ամեն ինչ գտնվում էր պատճառական կապի մեջ՝ Տիեզերքից սկսած մինչև մարդկային հասարակություն, որն էլ իր հերթին հանգեցնում էր լապլասյան դետերմինիզմին ու «մեքենայական քաղաքակրթության» հայեցակարգին²: Եթե մինչև քվանտային մեխանիկայի հիմնական օրինաչափությունների հայտնաբերումը գիտական միտքն առաջնորդվում էր դասական մեխանիկայի օրենքներով, որտեղ մակրոօբյեկտների մակարդակում ցածր արագությունների դեպքում, այլ կերպ ասած՝ քաղաքական դանդաղ ընթացքի պարագայում ժամանակի ցանկացած պահի հնարավոր էր կոնկրետ ամրագրել օբյեկտի հետագիծը տվյալ կոորդինատային համակարգում, ապա միկրոմասնիկների աշխարհում այդ օրինաչափությունները փոխակերպվում են անորոշությունների տեսությամբ, երբ միկրոմասնիկի հետագծի մասին կարելի է խոսել միայն հարաբերականորեն: Եվ դա կախված է ոչ թե մարդու հետազոտական հնարավորությունների սահմանափակվածությունից, այլ անորոշությունը տվյալ օբյեկտի բնական վիճակ է: Այս առումով, թերևս, հարկ է ընդգծել, որ նմանօրինակ փոփոխությունների են ենթարկվում նաև քաղաքականության ընկալման արդի մոտեցումները, երբ անորոշությունները դառնում են մեր քաղաքական իրականության անքակտելի ու բնական վիճակը: Ինչպես նշում է հետմոդեռնիզմի ներկայացուցիչներից Ռ. Բարտը, ներկայումս հասարակության կենսագործունեության տարբեր բնագավառներում տիրա-

² Տե՛ս **Пригожин И., Стенгерс И.** Порядок из хаоса: Новый диалог человека с природой. М., 1986, էջ 14:

պետող են ոչ թե կարգ ու կանոնը, այլ տարերայնությունն ու անկազմակերպվածությունը: Մարդկային վարքագծի և գործողությունների նպատակների ու միջոցների նախկին միակողմանի հստակությունը փոխարինվում է բազմազանությամբ, անորոշությամբ ու բարդությամբ, որոնք ավելի ու ավելի դժվարությամբ են յուրացվում ու զնահատվում մարդկանց կողմից³: Եվ իսկապես, ինչպես ցույց են տալիս ժամանակի գլոբալ փոփոխությունները, նույնիսկ զարգացած Արևմուտքի (էլ չենք խոսում զարգացող ու թերզարգացած երկրների մասին) արդի քաղաքական, տնտեսական, սոցիալական զարգացումները դժվար թե համարվեն խիստ կանոնակարգված: Արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմից մի քանի տասնամյակ հետո այդ երկրներում նկատվում էին հետմոդեռնիստական միտումներ, որոնք դրսևորվում էին բազմակարծության աննախադեպ աճով, այլընտրանքայնությամբ, իշխանության հիերարխիայի թուլացմամբ, սոցիալական միջավայրի ու մշակույթի հատվածականությամբ: Այս իրավիճակը լավագույնս նկարագրում է իսպանացի հետազոտող Կ. Վիդալը՝ նշելով, որ մարդկանց ձգտումը անվերջության, անիմաստ ազատությունը, անհետացման էսթետիկան, սոցիալական փախուստը, ապագադափարայնացումը հասարակական ոլորտը դարձրել էին անապատ, որտեղ մեր ասոցիալական ու մակերեսային աշխարհի վերքաղաքական, անմարդկային բնույթը վերածվել էր մշակույթի էքստատիկ քննադատության⁴: Իսկ ահա ռուս հեղինակ Ի. Իլյինը հետմոդեռնիզմը համեմատում է հին հունական դիցաբանության մեջ հայտնի «հիմերայի»^{*} հետ, նկատի ունենալով, որ հետմոդեռնիզմի մեջ համատեղվում են անհամատեղելի երևույթները՝ մի կողմից կյանքի ամբողջական ու աշխարհայացքային-գեղագիտական ընկալման անգիտակցական ձգտումը, իսկ մյուս կողմից XX դարի մարդկային փորձի ի սկզբանե հատվածականության, սկզբունքային անհամադրելիության հստակ գիտակցումը⁵: Իրականում, ինչպես նշում է Ի. Իլյինը, «ժամանակակից կյանքի հակասականությունն այնպիսին է, որ չի տեղավորվում ոչ մի մտահասանելի շրջանակի մեջ, ուստի յուրաքանչյուր տեսական մեկնաբանման ժամանակ ականա ծնում է ֆանտասմագորիկ բացատրական հայեցակարգեր»⁶: Մեր օրերում գործող այդպիսի «հիմերատեսություններից» ամենաազդեցիկը, ըստ Ի. Իլյինի, թերևս հենց հետմոդեռնիզմն է:

Այսպիսով, կարելի է փաստել, որ **գլոբալ անորոշությունները, ի թիվս քաղաքականության մեջ ռիսկի գործոնի մեծացման, սոցիալական հատվածականության, հասարակական-քաղաքական գործըն-**

³ Տե՛ս **Барт Р.** Избранные работы. Семиотика. Поэтика. М., 1989, էջ 71:

⁴ Տե՛ս **Ильин И. П.** Постмодернизм от истоков до конца столетия: эволюция научного мифа. М., 1998, էջ 172:

* Հին հունական դիցաբանում «հիմերա» էր կոչվում եռամարմին առասպելական հրեշը, որը ուներ երեք գլուխ՝ առջևից առյուծի, մեջտեղում այծի, իսկ պոչի հատվածում՝ վիշապի տեսքով: <http://greekroman.ru/chimera.htm>: Փոխաբերական իմաստով «հիմերան» ընկալվում է որպես անհնարին ու անհամատեղելի երևույթների համադրություն:

⁵ Տե՛ս **Ильин И. П.**, նշվ. աշխ., էջ 6:

⁶ Նույն տեղում:

թացների թատերականացման ու քաղաքականության՝ որպես տեքստային հաղորդակցության համակարգի ընկալման, դարձել են ժամանակակից հասարակության էկզիստենցիալ բնույթի կարևոր բնութագրիչներից մեկը:

Բայց այս դեպքում կարող է հարց առաջանալ, թե որքանով է ժամանակակից մարդը ֆիզիկապես ու հոգեպես պատրաստ ապրելու և հարմարվելու այս «գլոբալ անորոշությունների» դարաշրջանում: Չէ՞ որ ի սկզբանե մարդկային տեսակը հարմարված է աշխարհընկալման դասական մոդելին, այսինքն՝ ապրելու և արարելու որոշակիության ու կոնկրետության պայմաններում: Դժվար է այս հարցին միանշանակ պատասխան տալ: Յետմոդեռնիստական աշխարհընկալումը, որը հանդես է գալիս մի կողմից ունիվերսալիզմի ձգտող բոլոր տեսական հայեցակարգերի դեմ (որոնք անխուսափելիորեն հանգեցնում են մոնոլոգիզմի)՝ խրախուսելով հասարակության մեջ տարբեր կարգի՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային դիսկուրս-երկխոսություններ, մյուս կողմից՝ գերակայող արժեքային կողմնորոշումների ու դրանց տեսական-գաղափարական հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է սոցիալական այնպիսի բացասական երևույթների, ինչպիսիք են հասարակության տարբեր շերտերի մարգինալացման մեծացումը, ինքնամեկուսացումը, սոցիալական օտարումն ու ապատիան: Յենց վերջիններիս բացասական հետևանքների թուլացման նպատակով հետմոդեռնիզմի շրջանակներում փորձ է արվում առաջադրելու մարդու սոցիալականացման, հասարակական ինտեգրացիայի մակարդակի բարձրացման ռազմավարություններ, որոնք հիմնված են փոխադարձության (mutuality) ու երկխոսությանի հաղորդակցությունների լայն կիրառման պրակտիկայի վրա: Սակայն դրանք ավելի շատ աչքի են ընկնում իրենց կիրառման մակերեսայնությամբ, էլեկտիկ բնույթով, քան խորքային բովանդակությամբ: Այդ կապակցությամբ, թերևս, շատ ճիշտ դիտարկում է կատարում Վ. Ռախմանինը՝ նշելով, որ պետության և հասարակության, իշխանության ու ընդդիմության միջև ժողովրդավարական երկխոսությունը հետմոդեռնիստական քաղաքական տեխնոլոգիաներից ենթարկվում է մանիպուլյատիվ էքսպանսիայի⁷: Այդ տեխնոլոգիաներով ժողովրդավարական քաղաքական երկխոսության թվացյալ նմանություն են ստեղծում՝ իրականում նպատակ ունենալով մարդկանց ուշադրությունը շեղելու բուն խնդիրների իրական քննարկումից, եզրակացնում է հեղինակը՝ հավելելով. «Յետմոդեռնիզմը, մշակույթը բաժանելով տեքստերի, «արտադրում է» ոչ թե մշակույթների երկխոսություն, այլ տեքստերի բազմաձայնություն: Տեքստերը վերածվում են քաղաքական ապրանքի, որոնցով կարելի է սպեկուլյացիաներ ու տարաբնույթ մեկնաբանություններ անել: Դիսկուրսի դաշտը աստիճանաբար ձևախեղվում է: Յաղթելու ավելի մեծ հնարավորություն են ստանում ոչ թե հասարակական պահանջումներն ավելի խոր ու համարժեք ներկայացնողները, այլ նրանք, ովքեր կարողանում են ապրանքի սպառողական ար-

⁷ Տե՛ս **Рахманин В.** Диалог политических культур как демократический процесс // "Логос", 2005, № 4(49), էջ 263:

ժեքը թաքցնել գովազդային վառ փաթեթի մեջ»⁸: Գուցե փոքր-ինչ խիստ է ասված, բայց ցայտուն բնորոշում է հետմոդեռնիզմին յուրահատուկ քաղաքականության թատերականացման էֆեկտը:

Հետմոդեռնիստական իրողություններով պայմանավորված՝ ժամանակակից աշխարհի գլոբալ զարգացումները հանգեցրել են մի իրավիճակի, որը կարելի է համարել նաև «համընդհանուր փոխկախվածության» դարաշրջան: Այն հատկապես ցայտուն է դրսևորվում քաղաքականության մեզամակարդակում: Համաաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց այս նոր իրավիճակի ողջ «պերճամբն ու թշվառությունը»: Սկսված լինելով ԱՄՆ-ում, այն արագորեն տարածվեց ողջ աշխարհով մեկ՝ ծանր հարված հասցնելով շատ երկրների տնտեսությանը: Իհարկե, այդ ցնցումից անմասն չմնաց նաև Հայաստանը, որը գրանցեց տնտեսական ամենամեծ անկումներից մեկը:

Ֆարիդ Չաքարիան, անդրադառնալով համաաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին, նշում է, որ Մեծ լճացումից հետո աշխարհը նման մասշտաբային ճգնաժամ չէր տեսել, իսկ դրա առանձնահատկությունն այն էր, որ այն սկիզբ էր առել ոչ թե ինչ-որ տեղ՝ երրորդ աշխարհի խորքերում, այլ հենց գլոբալ կապիտալիզմի կենտրոնում՝ ԱՄՆ-ում, որտեղից էլ տարածվել էր միջազգային ֆինանսական կառույցների ողջ «արյունատար համակարգով»⁹: Խոսելով համաաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման ուղիների մասին՝ ամերիկյան առաջատար մասնագետներից Ն. Ֆերգյուսոնը նշում է, որ ազգային կառավարությունների միակողմանի գործողությունները կարող են լինել խիստ վնասակար ճգնաժամից արագ դուրս գալու ելքերի փնտրման հարցում¹⁰: «Հիմա, քան երբևէ, «ամեն մարդ իր համար» քաղաքականությունը կարող է լինել կործանարար»¹¹: Հեղինակը հատկապես անդրադառնում է ԱՄՆ-Չինաստան շահերի սերտ միահյուսվածության հիմնահարցին՝ նշելով, որ բանալին գտնվում է «Չինեթիկայի»^{*} ձեռքում: Ըստ Ֆ. Չաքարիայի՝ ճգնա-

⁸ Նույն տեղում:

⁹ Закария Ф. Постамериканский мир. М., 2010, с. 17.

¹⁰ Տե՛ս Ferguson Niall. “USA-China Cooperation Is Critical to Global Economic Health”. <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2008>

¹¹ Նույն տեղում:

* «Չինեթիկա» (Chimerica) հասկացությամբ Ն. Ֆերգյուսոնը փորձում է բնութագրել Չինաստանի և ԱՄՆ-ի շահերի սերտ միահյուսվածությունը: Իր աշխատություններից մեկում նա մասնավորապես այսպիսի միտք է արտահայտում. «Երբեմն թվում էր, թե այդ միությունը (նկատի ունի Չինաստանի ու ԱՄՆ-ի կամ այլ կերպ ասած՝ Chimerica-ն - Խ.Գ.) կնքվել է երկնքում: Արևելյան «չինեթիկացիները» խնայում են փողը, իսկ արևմտյան «չինեթիկացիները» ծախսում այն» (տե՛ս Ferguson, Niall. The Ascent of Money: A Financial History of the World. The Penguin Press HC, 2008):

Ի դեպ, այդ հասկացությունը հեղինակը ստեղծել է հին հունական դիցաբանությունից մեզ արդեն քաջածանոթ «հինեթիկայի» նմանությամբ՝ ԱՄՆ-Չինաստան «միությունը» համեմատելով այդ առասպելական հրեշի հետ: Սրանում թերևս կա որոշակի տրամաբանություն, մանավանդ որ Ն. Ֆերգյուսոնը ողջ գլոբալիզացիայի ապագան տեսնում է հենց այդ «միության» պահպանման մեջ: Եթե այն պահպանվի, ապա հնարավոր է տեսնել ճգնաժամից դուրս գալու արահետը, իսկ եթե ոչ, ապա կարելի է հրաժեշտ տալ գլոբալիզացիային, եզրակացնում է հեղինակը:

ժամից դուրս գալու ելքը «մնացածների վերելքն է»¹², քանի որ ԱՄՆ-ը արդեն ունակ չէ միայնակ ձևավորելու համաշխարհային քաղաքական-տնտեսական օրակարգը, և այդ տերության գերիզոթությունն այսօր արդեն անցյալում է: «Ու մինչև մենք չգտնենք գլոբալ համագործակցության ամրապնդման ու ծավալների մեծացման գործուն մեխանիզմներ, աշխարհում կլինեն նորանոր ճգնաժամեր, իսկ կառավարությունների պատասխան արձագանքները ավելի ու ավելի ուշացած ու աննշան»¹³, - եզրակացնում է հեղինակը: Ինչևիցե, կարելի է փաստել, որ մենք հիմա ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, որ համատեղ գործողությունները ոչ թե հնարավոր են, այլ «օդի ու ջրի» պես անհրաժեշտ: Այո՛, իսկապես, վերոնշյալ երկու գործոնները՝ «գլոբալ անորոշությունների աճն» ու «փոխադարձ կախվածության» մեծացումը, այն հիմնական նախադրյալներից են, որոնք ստիպում են քաղաքականության և՛ մեզա-, և՛ մակրո-, և՛ միկրոմակարդակներում խթանել համագործակցության երկխոսության կառուցակարգերը: Ֆ. Ֆուկույաման նշում է, որ XXI դարում քաղաքական ու տնտեսական ինստիտուտների գլոբալ կոնվերգենցիան հետզհետե դառնում է ակնհայտ¹⁴, և որ առանց սոցիալական շփումների անհնար է պատկերացնել մարդկային գործունեության որևէ ոլորտ, այդ թվում՝ և տնտեսականը: «Թեև կազմակերպություններում և ձեռնարկություններում աշխատանքի տեղավորվելով՝ մարդիկ դա համարում են սեփական պահանջումներների բավարարման միջոց, այնուամենայնիվ բուն գործունեությունը մարդկանց դուրս է բերում փակ, մասնավոր տարածությունից ու տարբեր ձևերով կապում իրենց հասարակությանը: Արտաքին աշխարհի հետ նման կապն արդեն ոչ թե միջոց է, այլ կարևոր կենսանպատակ, քանի որ մարդուն որքան բնորոշ է էգոիզմը, այնքան էլ այս կամ այն հասարակական ամբողջի մասը կազմելու պահանջումները: Իր նմանների հետ կապող նորմերի ու կանոնների բացակայության պայմաններում մարդը զգում է սուր անհանգստություն, մի իրավիճակ, որը Է. Դյուրկհեյմն անվանում է *anomie...*»¹⁵, - գրում է Ֆ. Ֆուկույաման: Ըստ Է. Դյուրկհեյմի՝ «անոմիայի» իրավիճակ է ստեղծվում այն ժամանակ, երբ աշխատանքի բաժանումը հակադրվում է համերաշխության սկզբունքներին, որի հետևանքով տարբերայնորեն ձևավորված կանոնների ամբողջությունը ընդունակ չի լինում կանոնակարգելու հասարակական ինստիտուտների հարաբերությունները: Ամենևին էլ պատահական չէ, որ Է. Դյուրկհեյմը ինքնասպանությունների դասակարգման շարքում առանձնացնում է հենց «անոմիական» ձևը, որը հատկապես մեծ աճ է արձանագրում հասարակական-քաղաքական ճգնաժամերի ու աղետների ժամանակ, երբ մարդիկ չեն կարողանում հարմարվել արագ փոփոխվող նոր իրավիճակներին: Մենք նույնպես արդեն ականատես ենք լինում շատ դեպքերի, երբ համաշխարհային ու տեղական լրատվամիջոցները հեղեղված են ինքնասպանություններին վերաբերող նյութերով:

¹² Закария Ф., նշվ. աշխ., էջ 18:

¹³ Նույն տեղում, էջ 23:

¹⁴ Տե՛ս Фукуяма Ф. Доверие: социальные добродетели и путь к процветанию. М., 2008, էջ 13:

¹⁵ Նույն տեղում, էջ 19:

Հայաստանը նույնպես, ընդհանուր առմամբ, հետ չի մնում փոխա-
կերպման փուլում գտնվող սոցիալ-քաղաքական համակարգերին բնորոշ
ընդհանուր օրինաչափություններից, որոնցից մեկն էլ փոփոխվող նոր ի-
րավիճակներին արագ հարմարվելու անկարողությունն է: Հայ մասնագետ-
ների կարծիքով, մարդկանց ինքնասպանության են դրդում կյանքի իմաս-
տազրկումը, հարազատների, բարեկամների անտարբերությունը, հուսա-
հատությունն ու մենակությունը, որոնցից հենց մարդը ընկնում է դեպրե-
սիայի մեջ¹⁶: Իսկ Հայկական սոցիոլոգիական ընկերակցության նախա-
գահ Գ. Պողոսյանի կարծիքով, երբ տվյալ հասարակության մեջ ինքնա-
սպանությունների կտրուկ աճ է արձանագրվում, ապա դա վկայում է սո-
ցիալական միջավայրում տեղի ունեցած փոփոխությունների մասին: Ըստ
նրա, երբ տնտեսական ճգնաժամի կամ սոցիալական լարվածության
հետևանքով թուլանում է մարդու կապը սոցիումի հետ, նրա մեջ կյանքին
վերջ տալու ցանկություն է առաջանում¹⁷: Հայաստանում, փաստորեն,
2008 թ. հետո վերոնշյալ երկու գործոններն էլ՝ և՛ տնտեսական ճգնաժամը,
և՛ սոցիալական լարվածությունը, առկա են, ինչն ուղղակիորեն նպաստում
է ինքնասպանությունների թվի կտրուկ աճին: Այդ մասին է վկայում նաև
պաշտոնական վիճակագրությունը, ըստ որի՝ 2009 թ. համեմատ 2010 թ.
ինքնասպանության փորձի դեպքերը աճել են 18,9%-ով, իսկ 2012 թ. առա-
ջին կեսում՝ 50%-ով ավելի, քան 2011 թ. նույն ժամանակահատվածում¹⁸:
Սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ հայ հասարակությունը գտնվում է
«անոմիական» վիճակում, որից շուտափույթ դուրս գալը մեզ համար ունի
ազգային անվտանգության նշանակություն:

Այսպիսով, կարելի է փաստել, որ հետմոդեռնիստական աշխարհա-
կարգում մարդկային կենսագործունեության վրա ազդում է երկու կարևոր
գործոնների՝ «գլոբալ անորոշությունների» ու «փոխադարձ կախվածու-
թյան» աճը: Եթե առաջինը պարունակում է հասարակության հատվածա-
կանության մեծացման, մարդու ինքնամեկուսացման ու օտարման տար-
րեր, ապա երկրորդ գործոնն ավելի շատ օժտված է հասարակության ին-
տեգրացիայի խորացման, երկխոսության եղանակով համաշխարհային,
տարածաշրջանային ու տեղային նշանակության խնդիրների լուծման նե-
րուժով: Նման կարգի գլոբալ փոփոխությունները, բնականաբար, չեն կա-
րող չազդել նաև հասարակության քաղաքական ինքնակազմակերպման
ու քաղաքականության իրականացման մեթոդաբանության վրա՝ այստեղ
նույնպես առաջ քաշելով քաղաքական նոր օրակարգեր: Մասնավորա-
պես, հետմոդեռնիստական հասարակության այնպիսի բնութագրիչներ,
ինչպիսիք են հետինդուստրիալ, տեղեկատվական ու գիտելիքահենք ար-
տադրությունը, ինտեգրացիոն հաղորդակցության նոր տեսակների առա-
ջացումն ու հասարակության վրա նրանց ունեցած ազդեցությունը, հասա-
րակության սոցիալական կառուցվածքի հատվածականության մեծացումը
քաղաքական գիտության պրոբլեմատիկայի շարքում նոր խնդիրներ ու
հարցադրումներ են առաջ բերում, որոնցից մեկն էլ **երկխոսության հա-**

¹⁶ Տե՛ս <http://www.azatutyun.am/content/article/24580274.html>

¹⁷ Տե՛ս <http://med-practic.com/arm/17/18988/article.more.html>

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

դորդակցական համակարգերի ներդրումն է ինչպես քաղաքական իշխանության իրականացման գործընթացում, այնպես էլ «կլաստերային սոցիալական միջավայրում»¹⁹: Բանն այն է, որ ժամանակակից հասարակական-քաղաքական իրողությունների պայմաններում, երբ քաղաքականության տարածաժամանակային չափումներն ակնհայտ փոփոխության են ենթարկվում, երբ քաղաքական ճգնաժամերը, ներքաղաքական բախումներն ու գլոբալ անորոշությունները դարձել են մեր դարաշրջանի հիմնական բնութագրիչները, երբ իշխանության իրականացման նախկին՝ հրաման-ենթարկում ուղղահայաց կառուցակարգերը փոխարինվում են ավելի փափուկ մեխանիզմներով, քաղաքական երկխոսության պրոբլեմատիկան ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն ու արդիականություն: Այդ առումով ամենևին էլ պատահական չէ, որ քաղաքական երկխոսության հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրությունը սկիզբ է առնում միայն XX դարի երկրորդ կեսից սկսած, քանի որ մինչ այդ գաղափարապես ավելի պահանջված էին քարոզչական, տեղեկատվական պատերազմներն ու կոնֆլիկտները, քան, ասենք, երկխոսությունն ու կոնսենսուսը: Ամբողջատիրական ու ավտորիտար համակարգերում երկխոսությանը տեխնոլոգիաների նկատմամբ հետաքրքրության բացակայությունը հասկանալի է. չէ՞ որ այդ ռեժիմներն ինքնին հակված են գաղափարական մեծախոսության: Ամբողջատիրական առաջնորդների ու իշխանական բյուրոկրատիայի աստիճանահարթակում նրանց բազմաթիվ «արտացոլանքների» հետ անհմաստ է երկխոսության մեջ մտնել, առավել ևս քննարկել քաղաքական կամ այլ բնույթի հիմնահարցեր: Իսկ ահա ժողովրդավարական համակարգերում երկխոսությանը տեխնոլոգիաները, Ս. Պոցելուկի բնորոշմամբ, «վերածվում են արտադրական անհրաժեշտության», իսկ մեկ այլ ռուս հեղինակ Վ. Սերգեևի կարծիքով, «իրական արդյունավետ ժողովրդավարությունը ոչ այնքան արդար ընտրությունների միջոցով ձևավորվող մեծամասնության իշխանությունն է, որքան հասարակության մեջ մշտական բանակցային գործընթացներ ապահովող ինստիտուտների համակարգի առկայությունը»²⁰: Այն, որ երկխոսությանը տեխնոլոգիաները (բանակցությունների կամ այլ տեսքով) Արևմուտքում լայնորեն կիրառվում են իշխանության իրականացման գործընթացում, թերևս նորություն չէ: Դեռ ավելին, իշխանության ծագման ու մեկնաբանման ժամանակակից տեսություններում քիչ չեն այն հայեցակարգերը, որոնք բացահայտում են իշխանության երկխոսության բնույթը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, իշխանական հարաբերությունների մեկնաբանման խմբային տեսության շրջանակներում գործող խաղային, ռեսուրսների փոխանակման, ազդեցության գոտիների բաժանման հայեցակարգերին, որոնք իշխանության երևույթին մոտենում են ոչ այնքան որպես իշխանության սուբյեկտի կողմից օբյեկտի դիմադրության կոտրում կամ որպես կոշտ ենթակայության հարաբերություններ (*hard power*), այլ ավելի շատ որպես միմյանց վրա սուբյեկտ-օբյեկտային փոխադարձ ազդեցություն գործող բանակցա-

¹⁹ Аберкромби Н., Хилл С., Тернер Б. С. Социологический словарь. М., 2004, էջ 341-342:

²⁰ Сергеев В. М. Демократия как переговорный процесс. М., 1999, с. 45.

յին հարաբերություններ: Այս դեպքում մենք գործ ենք ունենում իշխանության իրականացման երկխոսության, այսպես կոչված՝ փափուկ (*soft power*) պրակտիկաների հետ, որը ոչ պակաս ամուր ու հուսալի է, իսկ երբեմն՝ նույնիսկ դառնում է իշխանության իրականացման միակ ընդունելի ճանապարհը, քանի որ այդ դեպքում գործ ունենք կամավոր ենթարկման, իշխանության հետ մեկ միասնական «թիմում» հանդես գալու իրական կամ երևութական զգացողության հետ: Երկխոսության տեխնոլոգիաների կիրառմամբ հասարակական-քաղաքական լայն համախմբման ու համաձայնության հաստատման հրամայականն է ծառայած նաև ժամանակակից հայ հասարակության առջև: Նմանատիպ փորձ 2011 թ. կատարվեց իշխանության և ընդդիմության միջև, որը նպատակ ուներ հաղթահարելու մարտի 1-ից հետո հայ հասարակության մեջ արմատացած նիհիլիստական տրամադրություններն ու բացասական սպասումները: Հասարակական-քաղաքական մթնոլորտի առողջացման առումով այդ կարևոր քաղաքական իրադարձությունը, սակայն, արագորեն վերափոխվեց իրական քաղաքական երկխոսության նմանակման: Չնայած կարճաժամկետությանը, այնուամենայնիվ պետք է փաստել, որ այն որոշակի դրական արդյունքներ տվեց հասարակական լարվածությունը մեղմելու, քաղաքական հանդուրժողականության ու երկխոսության մշակույթ արմատավորելու առումով: Իրական հասարակական-քաղաքական երկխոսության կարիք մեր հասարակությունը շատ է զգում, ուստի իշխանություն-հասարակություն կամ իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերությունները շուտափույթ պետք է վերաճեն ինստիտուցիոնալ երկխոսության:

ХАЧИК ГАЛСТЯН – Проблема политического диалога в постмодернистских реалиях. – В статье рассматриваются современные тенденции развития общества в рамках постмодернистских реалий. В частности, выделены характерные факторы постмодернистского мира – растущая роль «глобальных неопределённостей» и взаимозависимость при построении нового глобального миропорядка. С усилением этих факторов становится необходимым глобальный политический диалог на мега-, макро- и микроуровнях. Вопрос, однако, в том, что, с одной стороны, в новых реалиях политические акторы более интенсивно прибегают к диалоговым коммуникациям, а с другой – эти коммуникации нередко искажают суть диалога, превращая его в «квази-» или «парадиалог». В рамках постмодернизма властные отношения трансформируются, и диалог является наиболее предпочтительным способом решать конфликты и разногласия, а также наиболее эффективным механизмом осуществить мягкие (*soft power*) властные технологии.

KHACHIK GALSTYAN – The Issues of Political Dialogue in Post-Modern Realities. – This article deals with the current trends of development of society in the post-modern realities. In particular, the author identifies two distinctive factors of post-modern world order - strengthening the role of "global uncertainty" and "interdependence" in building a new world order. As a result of these factors, we need a global political dialogue on mega, macro and micro levels of the political activity of society.

Postmodern political dialogue has controversial essence because various political actors resort to the intensive dialogue communications. On the other hand - these communications are mostly focused on the distortion of the essence of political dialogue and on the theatricality of the political process, transforming it in "quasidialogue" or "paradialogue." Considering the transformation of power relations within the framework of postmodernism, the author arrives at a conclusion that in post-modernism dialogue is the most preferred method of resolving conflicts between political actors and as well as the most effective mechanism for the implementation of the soft power technologies in modern society.